ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

10 հունիսի չորեքշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

73
(3282)

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

ԲՀԿ–Ի ՃԱԿԱՏԱԳԻՐՆ ԱՆՈՐՈՇ Է

Ընդդիմադիր ճամբարում հետընտրական հիմնական տրամադրությունը շարունակում է մնալ սպասողական. ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը պատրաստվում է հունիսի 14-ին հրապարակել ընտրությունների վերջնական արդյունքները: Սպասման գլխավոր թեման ԲՀԿ-ի ճակատագիրն է: Կուսակցությանը խորհրդարան անցնելու համար պակասում է մոտ 70 ձայն, եւ այժմ իրականացվող վերահաշվարկը պետք է հստակեցնի՝ այդ ձայները գտնվում են, թե ոչ: Եթե ԲՀԿ-ն հաղթահարի անցողիկ շեմը, ապա Ազգային Ժողովում ընդդիմադիր դաշտի պատկերն ամբողջությամբ կփոխվի:

Հիշեցնենք որ խորհրդարանն ընտրում կամ նշանակում է հետեւյալ բարձրագույն պաշտոնատար անձանց պատգամավորների փակ, գաղտնի քվեարկությամբ՝ ՀՀ նախագահ, ՀՀ վարչապետ, ՀՀ սահմանադրական դատարանի դատավորներ, ՀՀ վճռաբեկ դատարանի դատավորներ եւ նախագահ, ՀՀ բարձրագույն դատական խորհրդի գիտնական անդամներ, ՀՀ մարդու իրավունքների պաշտպան, ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամներ եւ նախագահ, ՀՀ հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովի անդամներ, ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամներ, ՀՀ կենտրոնական բանկի նախագահ եւ խորհրդի անդամներ, ՀՀ հաշվեքննիչ պալատի նախագահ եւ անդամներ, ՀՀ գլխավոր դատախազ:

Այսինքն՝ ԲՀԿ-ի՝ խորհրդարան մտնելու պարագայում ՔՊ-ն շատ օրենքներ ընդունելու համար պետք է ընդդիմության «դուռը գնա»: Թերեւս դրա համար արդեն քրեական հետապնդում հարուցվեց Գագիկ Ծառուկյանի նկատմամբ եւ թույլ չտվեցին լքել երկիրը՝ մեկնել հանգստի:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

Դատական համակարգում, հատկապես հակակոռուպցիոն դատարանում, վերջին մի քանի ամիսները չափազանց ծանր են անցել: Առանձնապես ծանրաբեռնված են եղել քրեական գործեր քննող դատավորները: Բանն այն է, որ նախընտրական շրջանում նախաքննական մարմիններն այնքան մեծ թվով անձանց են ներկայացրել դատարան՝ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդություններով, որ շատ դատավորներ իրենց առավոտը դիմավորել են դատարանի աշխատասենյակներում: Ավելին, մեզ հայտնի դարձավ, որ դատավորներից շատերը նույնիսկ չեն կարողացել անցկացնել իրենց վարույթներում նախապես նշանակված դատական նիստերը, քանի որ ամբողջ գիշեր զբաղված են եղել նախընտրական գործընթացներին առնչվող կալանքի միջնորդությունների քննարկմամբ: Հիշեցնենք, որ 2026 թվականի փետրվարի 7-ից մինչեւ 2026 թվականի հունիսի 7-ը՝ ժամը 18:00-ի դրությամբ, ընտրական հանցագործությունների վերաբերյալ ստացված դիմումների, հաղորդումների եւ դրանց քննության արդյունքների վերաբերյալ դատախազությունը հրապարակել է հետեւյալ տվյալները. ըստ դատախազությունում ստացված եւ մշակված տեղեկությունների՝ Ազգային Ժողովի հերթական ընտրությունների գործընթացի մեկնարկից մինչեւ հունիսի 7-ը՝ ժամը 18:00-ն, ընտրական գործընթացին խոչընդոտող առերեւույթ հանցագործությունների վերաբերյալ ստացվել է ընդհանուր 425 հաղորդում:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

Չնայած ընտրություններն արդեն ավարտվել են, Երեւանի եւ մարզերի մի շարք համայնքներում դեռեւս պահպանվում են թեկնածուների եւ քաղաքական ուժերի նախընտրական պաստառները: Այս հանգամանքը հարցեր է առաջացնում՝ արդյոք օրենքը պարտադրում է դրանք հեռացնել ընտրություններից հետո, եւ ով է պատասխանատու այդ գործընթացի համար: ՀՀ ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածը սահմանում է, թե որտեղ եւ ինչ պայմաններով կարող են տեղադրվել նախընտրական քարոզչական պաստառները: Սակայն օրենսգրքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գործող կարգավորումներում առանձին դրույթ չկա, որը կսահմանի ընտրությունների ավարտից հետո պաստառների պարտադիր ապամոնտաժման ժամկետը կամ պատասխանատու մարմինը: Միաժամանակ, նախկին ընտրական օրենսդրության որոշ կարգավորումներում ամրագրված էր, որ հանրային միջոցառումների ընթացքում փակցված քարոզչական պաստառները միջոցառման ավարտից հետո պետք է հեռացվեն համապատասխան թեկնածուի կամ քաղաքական ուժի կողմից: Ստացվում է, որ գործող իրավական դաշտում առկա է որոշակի բաց:

⇨ *էջ 3*



2026 թվականի հունիսի 8-ին հանրային քրեական հետապնդում է հարուցվել Կոտայքի նախկին մարզպետ Կարապետ Գուլոյանի նկատմամբ՝ արգելանքի տակ գտնվող գույքի հետ ապօրինի արարք կատարելու համար: Գլխավոր դատախազությունը տեղեկացրել էր, որ, ի թիվս այլնի, 2026 թվականի մայիսի 12-ին, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործով օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա, Հայաստանի Հանրապետության սեփականության իրավունքն է գրանցվել Կոտայքի նախկին մարզպետ, Աբովյան համայնքի նախկին ղեկավար Կարապետ Գուլոյանից եւ նրա կնոջից՝ Ռոզա Գագիկի Ծառուկյանից բռնագանձված՝ Կոտայքի մարզի Առինջ գյուղի Պ. Սեւակ թաղամասի 14-րդ փողոցի թիվ 8 հասցեի անշարժ գույքի՝ ապօրինի ճանաչված մասի՝ շուրջ 91%-ի նկատմամբ: Նախաձեռնված քրեական վարույթով պարզվել է, որ Կարապետ Գուլոյանը տեղեկացված է եղել, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործով ՀՀ հակակոռուպցիոն դատարանի կողմից կիրառվել է հայցի նախնական ապահովման միջոց՝ արգելանք, դատարանի կողմից արգելվել է գույքի տնօրինման հետ կապված գործողություն կատարելը, սակայն կազմակերպել է վերոնշյալ բնակելի տան արտաքին եւ ներքին, ինչպես նաեւ նկուղային պատերի վնասումը: Մասնավորապես, կազմակերպել է բնակելի տան արտաքին եւ ներքին պատերի երեսպատված սալիկների ապամոնտաժումը, դռների ու պատուհանների տեղահանումը եւ այլն:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ՄԵՆՔ ԲՈԼՈՐՍ ԱՅՍ ՏԱՐԻՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՓՈԽՎԵԼ ԵՆՔ»

ArmLur.am-ը զրուցել է ՔՊ վարչության անդամ Վիլեն Գաբրիելյանի հետ:

- Երբ որոշեցիք մտնել քաղաքականություն, ինչպե՞ս դա ընդունվեց ընտանիքում: Կային արդյոք մտահոգություններ կամ կորուստներ այդ որոշման պատճառով:

- Քաղաքական ակտիվությամբ զբաղվել եմ դեռ մինչեւ 2018 թվականը: Ընտանիքս գիտեր իմ համոզմունքների մասին: Եթե անգամ որեւէ մեկը դեմ լիներ, դա չէր փոխի իմ որոշումը, որովհետեւ համոզված էի, որ նախկին համակարգում առկա անարդարությունների դեմ պետք է պայքարել:

- Ի՞նչը Ձեզ բերեց քաղաքականություն: Ի՞նչն էր հիմնական շարժառիթը:

- Մեծ դեր ունեցավ դաստիարակությունս: Ծնողներս ինձ սովորեցրել են չանցնել անարդարության կողքով: Երբ տեսնում ես, որ խնդիրները չեն լուծվում իրավական կամ բարոյական ճանապարհով, հասկանում ես, որ փոփոխությունների համար պետք է զբաղվել քաղաքականությամբ եւ նպաստել ժողովրդավարության հաստատմանը:

- Ինչպե՞ս ծանոթացաք Նիկոլ Փաշինյանի հետ եւ ինչպե՞ս սկսվեց ձեր համագործակցությունը:

- Ի սկզբանե նպատակ չունեի հենց Նիկոլ Փաշինյանի թիմակիցը դառնալ: Առաջին անգամ նրան տեսել եմ 2007 թվականին՝ հանրահավաքի ժամանակ: Տպավորված էի նրա համարձակությամբ: 2008 թվականի ընտրություններից եւ Մարտի 1-ի իրադարձություններից հետո ավելի ակտիվ ներգրավվեցի քաղաքական գործընթացներում: Հետագայում նամակագրություն ունեցանք, իսկ նրա ազատ արձակվելուց հետո արդեն անձամբ ծանոթացանք: Այդ հարաբերությունները ժամանակի ընթացքում դարձան ոչ միայն քաղաքական, այլեւ ընկերական:

- Այսօր, երբ Նիկոլ Փաշինյանը վարչապետ է, ինչպե՞ս են փոխվել ձեր հարաբերությունները:

- Բնականաբար, ժամանակը շատ ավելի սահմանափակ է դարձել: Վարչապետի պատասխանատվությունն ու ծանրաբեռնվածությունը շատ մեծ են: Սակայն հարաբերությունները պահպանվել են: Մենք բոլորս այս տարիների ընթացքում փոխվել ենք թե՛ փորձառության, թե՛ այն դժվարությունների ազդեցությամբ, որոնց միջով անցել է երկիրը:

- Կարո՞ղ եք վարչապետին ասել, որ նա սխալվում է, կամ խորհուրդ տալ նրան:

- Այո, իհարկե: Մեր թիմի սկզբունքներից մեկն այն է, որ չպետք է լինի հարց, որը չի կարելի քննարկել: Երբեք չեմ զգացել, որ չեմ կարող ազատ արտահայտել իմ կարծիքը: Նիկոլ Փաշինյանը միշտ լսել է փաստարկված տեսակետները, նույնիսկ եթե դրանք տարբերվել են իր մոտեցումներից:

Զրուցեց՝ ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ

ՈՒՇԱԳՐԱՎ ԼՌՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում կայացած Ազգային Ժողովի ընտրություններից հետո վարչապետ Նիկոլ Փաշինյանին շնորհավորել են տասնյակ երկրների ղեկավարներ՝ ԱՄՆ-ից, Կանադայից, Ֆրանսիայից, Գերմանիայից, Հնդկաստանից, Իրանից, Վրաստանից եւ եվրոպական մի շարք երկրներից: Սակայն մի շարք կարեւոր դերակատարների կողմից առայժմ հրապարակային շնորհավորանքներ չեն արձանագրվել:

Առաջին հերթին ուշադրության կենտրոնում է Ռուսաստանը: Չնայած հայ-ռուսական հարաբերություններում առկա բազմաթիվ տնտեսական, քաղաքական եւ անվտանգային կապերին, ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը դեռեւս հրապարակային շնորհավորական ուղերձ չի հղել Նիկոլ Փաշինյանին: Ավելին, Ռուսաստանի պաշտոնական արձագանքը մինչ այս պահը ներկայացվել է ոչ թե շնորհավորանքի, այլ գնահատականների տեսքով: ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան հայտարարել էր, որ ընտրություններն անցկացվել են «ընդդիմության նկատմամբ աննախադեպ ճնշումների եւ Արեւմուտքի, առաջին հերթին՝ Եվրամիության միջամտության պայմաններում»: Նա նաեւ նշել էր, որ նախնական արդյունքները ցույց են տալիս՝ իշխանությունը չի ստացել «իշխանության մենաշնորհ»:

Ուշագրավ է նաեւ, որ հրապարակային շնորհավորանք չի հնչել Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի կողմից: Սա առանձնահատուկ ուշադրության է արժանի՝ հաշվի առնելով, որ վերջին ամիսներին Երեւանն ու Բաքուն ակտիվ բանակցություններ են վարում խաղաղության համաձայնագրի շուրջ:

Առայժմ հրապարակային շնորհավորանք չի արձանագրվել նաեւ Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանից: Մինչդեռ վերջին տարիներին, ըստ իշխանության քայլերի, հայ-թուրքական կարգավորման գործընթացը եղել է Հայաստանի արտաքին քաղաքական օրակարգի կարեւոր ուղղություններից մեկը:

Շնորհավորողների ցանկում չեն հայտնվել նաեւ արաբական աշխարհի մի շարք առանցքային առաջնորդներ: Մասնավորապես, հրապարակային ուղերձներ չեն արձանագրվել Սաուդյան Արաբիայի թագաժառանգ Մուհամմեդ բին Սալմանից, Արաբական Միացյալ Էմիրությունների նախագահ Մուհամմեդ բին Զայեդ Ալ Նահյանից, Քաթարի էմիր Թամիմ բին Համադ Ալ Թանիից եւ Եգիպտոսի նախագահ Աբդել Ֆաթահ աս-Սիսիից, որոնց երկրների հետ Հայաստանը վերջին տարիներին ակտիվացրել է քաղաքական եւ տնտեսական համագործակցությունը:

Հրապարակային շնորհավորանքներ առայժմ չեն արձանագրվել նաեւ Չինաստանի նախագահ Սի Ցզինպինի, Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոյի, Ղրղզստանի նախագահ Սադիր Ժապարովի եւ Տաջիկստանի նախագահ Էմոմալի Ռահմոնի կողմից:

Այսպիսով, եթե արեւմտյան երկրների եւ եվրոպական կառույցների ներկայացուցիչները բավական արագ արձագանքեցին ընտրությունների արդյունքներին, ապա Ռուսաստանի, Թուրքիայի, Ադրբեջանի եւ մի շարք այլ երկրների ղեկավարների լռությունը շարունակում է ուշադրության կենտրոնում մնալ:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԱՎԵԼԻՒ ՔԱՆ 30 ՄԼՆ ԴՐԱՄ ԿՍՏԱՆԱՆ

ԱԺ 2026 թվականի հունիսի 7-ի խորհրդարանական ընտրությունների նախնական արդյունքների համաձայն՝ ընդհանուր առմամբ 105 մլն դրամ ընտրագրավի գումար հետ չի վերադարձվի օրենքով սահմանված 4 տոկոսի շեմը չհաղթահարած 14 կուսակցություններին եւ կփոխանցվի ՀՀ պետական բյուջե: Սա այն դեպքում, եթե վերահաշվարկի արդյունքում «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը նույնպես հաղթահարի անցողիկ շեմը եւ մտնի խորհրդարան: Փոխարենը՝ անցողիկ շեմը հաղթահարած 6 քաղաքական ուժեր՝ 4 կուսակցություն (ՔՊԿ, ԲՀԿ, ՄԻԹԿ, ՀՇՊԿ) եւ 2 դաշինք («Ուժեղ Հայաստան», «Հայաստան»), 4 տարի շարունակ պետական բյուջեից կստանան ֆինանսավորում: Նշենք, որ «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի համաձայն՝ կուսակցությունների պետական ֆինանսավորումը (պետական սուբսիդավորումը) իրականացվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին՝ նպատակ ունենալով խթանելու որոշակի հանրային աջակցություն ունեցող եւ եկամտի այլ էական աղբյուրներ չունեցող կուսակցությունների կենսունակությունն ու ինքնուրույնությունը: Այդ ծախսերն արտացոլվում են պետական բյուջեում առանձին հոդվածով: Պետական ֆինանսավորում հատկացվում է այն կուսակցությանը (կուսակցությունների դաշինքին), որի ընտրական ցուցակն Ազգային Ժողովի վերջին ընտրությունների ժամանակ ստացել է քվեարկությանը մասնակցած բոլոր կուսակցությունների ընտրական ցուցակների օգտին կողմ տրված ձայների ընդհանուր թվի եւ անճշտությունների թվի գումարի առնվազն երկու տոկոսը, իսկ կուսակցությունների դաշինքի դեպքում՝ յոթ տոկոսը: Պետական բյուջեի միջոցները նախատեսված շեմը հաղթահարած յուրաքանչյուր կուսակցությանը բաշխվում են 2-ից մինչեւ 5 տոկոս ձայներ ստանալու դեպքում՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի չափով՝ յուրաքանչյուր ձայնի դիմաց:

Ըստ այդմ՝ ընտրությունների նախանական արդյունքներով 2 տոկոսի շեմը հաղթահարած, սակայն խորհրդարան չանցած Գուրգեն Սիմոնյանի գլխավորած «Հայաստանի շնորհապետական կուսակցությունը», որը ստացել է 30,807 ձայն, տարեկան կստանա ավելի քան 30,8 մլն, իսկ «Միասնության թեւեր» կուսակցությունը, որը ստացել է 33,644 ձայն, տարեկան կստանա 33,6 մլն դրամ հերթական ֆինանսավորում: Այս գումարները կուսակցություններին կտրամադրվեն կիսամյակային սկզբունքով, բայց ոչ շուտ, քան Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից նրանց տարեկան հաշվետվությունների ստուգումը, իսկ կառուցվածքով ու գործունեությամբ պայմանավորված պետական նպատակային ֆինանսավորումը կհատկացվի միանվագ սկզբունքով:

Կուսակցությունների պետական ֆինանսավորումն իրականացվում է տվյալ գումարման Ազգային Ժողովի լիազորությունների ժամանակահատվածում եւ դադարեցվում Ազգային Ժողովի լիազորությունների ժամկետի ավարտման օրը:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՊԱՍՏԱՌՆԵՐԸ ՄՆՈՒՄ ԵՆ

Չնայած ընտրություններն արդեն ավարտվել են, Երեւանի եւ մարզերի մի շարք համայնքներում դեռեւս պահպանվում են թեկնածուների եւ քաղաքական ուժերի նախընտրական պաստառները: Այս հանգամանքը հարցեր է առաջացնում՝ արդյոք օրենքը պարտադրում է դրանք հեռացնել ընտրություններից հետո, եւ ով է պատասխանատու այդ գործընթացի համար: ՀՀ ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածը սահմանում է, թե որտեղ եւ ինչ պայմաններով կարող են տեղադրվել նախընտրական քարոզչական պաստառները: Սակայն օրենսգրքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գործող կարգավորումներում առանձին դրույթ չկա, որը կսահմանի ընտրությունների ավարտից հետո պաստառների պարտադիր ապամոնտաժման ժամկետը կամ պատասխանատու մարմինը: - Միաժամանակ, որոշ կարգավորումներում ամրագրված էր, որ հանրային միջոցառումների ընթացքում փակցված քարոզչական պաստառները միջոցառման ավարտից հետո պետք է հեռացվեն համապատասխան թեկնածուի կամ քաղաքական ուժի կողմից: Ստացվում է, որ գործող իրավական դաշտում առկա է որոշակի բաց: Օրենքը մանրամասն կարգավորում է քարոզչական նյութերի տեղադրման կարգը, սակայն հստակ պատասխան չի տալիս ընտրություններից հետո դրանց հեռացման պարտականության եւ ժամկետների վերաբերյալ: Արդյունքում, ընտրարշավի ավարտից հետո էլ բազմաթիվ համայնքներում շարունակում են պահպանվել նախընտրական պաստառներ, ինչը հարցեր է առաջացնում համայնքային տարածքների պատշաճ կառավարման եւ վերահսկողության արդյունավետության վերաբերյալ: Փաստացի, գործող օրենսդրությունը չի սահմանում, թե ով եւ երբ պետք է հեռացնի նախընտրական կամ այլ քաղաքական բնույթի պաստառները: Այդ պատճառով նման աշխատանքների իրականացումը հիմնականում մնում է տեղական ինքնակառավարման մարմինների՝ քաղաքապետարանների եւ համայնքապետարանների պատասխանատվության շրջանակում:

Ա. Վ.

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԿԼԻՆԻ

ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հայտնել է, որ հունիսի 2-ին Կարսում տեղի է ունեցել լուրջ հանդիպում Հայաստանի եւ Թուրքիայի գործարարների միջեւ: «Այն կազմակերպված էր երկու կողմերի ԱԳ նախարարությունների եւ առեւտրապալատների մասնակցությամբ: Այս հանդիպումը տարբերվում էր նախորդ հանդիպումներից, քանի որ օրակարգը հագեցած էր, եւ Թուրքիայի երեք նահանգների գործարար շրջանակների կողմից մեծ հետաքրքրություն կար»,-ասել է նա: Ըստ Միրզոյանի՝դա շատ լավ սկիզբ է: «Առաջիկայում մենք կունենանք երկրորդ հանդիպումը Հայաստանի տարածքում: Տեղյակ եմ, որ գործարար շրջանակների առանձին ընկերություններ կոնկրետ խոսակցություններ են սկսել, եւ վստահ եմ, որ կտեսնենք այդ խոսակցության շարունակությունը»,- եզրափակել է ԱԳ նախարարը:

ՈՎՔԵՐ ԿՄՆԱՆ

ԵՐԲ ԿԸՆՏՐԵՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Թեեւ գործող խորհրդարանի լիազորությունների ավարտին դեռ ժամանակ կա, իշխանական կուլիսներում արդեն ակտիվ քննարկվում է հետընտրական իշխանության կազմավորման հարցը:

Armlur.am-ի իշխանական աղբյուրները փոխանցում են, որ նոր խորհրդարանը կարող է իր առաջին նիստը գումարել արդեն սեպտեմբերի 7-ին, իսկ օրակարգի գլխավոր հարցը լինելու է ՀՀ վարչապետի ընտրությունը: Իշխող ՔՊ ուժը կառաջադրի ՀՀ վարչապետի թեկնածու Նիկոլ Փաշինյանին, նրան կընտրեն վարչապետ: Դրանից անմիջապես հետո կսկսվի նոր կառավարության ձեւավորման գործընթացը, սակայն ամենամեծ ինտրիգը հենց այստեղ է՝ ովքե՞ր կպահպանեն իրենց պաշտոնները, եւ ովքե՞ր կհայտնվեն քաղաքական «փոխարինման ցուցակում»: Իշխանական շրջանակներից ArmLur.am-ին փոխանցում են, որ կառավարության ներսում դեռ վերջնական որոշումներ չկան, սակայն կան պաշտոնյաներ, որոնց դիրքերը բավական ամուր են: Խոսքը, մասնավորապես, արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանի, պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանի եւ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանի մասին է: Ըստ նույն աղբյուրների՝ Փաշինյանը գոհ է նրանց աշխատանքից, եւ նրանք, ամենայն հավանականությամբ, կշարունակեն պաշտոնավարել նաեւ նոր կառավարության կազմում:

Սակայն իրավիճակը միանշանակ չէ: Իշխանության ներսում հասկանում են, որ հանրության համար նույն կազմով կառավարության վերարտադրությունը կարող է ընկալվել որպես քաղաքական անշարժություն: Հենց այդ պատճառով, ըստ տեղեկությունների, Փաշինյանը թիմակիցների հետ քննարկումներում ակնարկել է, որ որոշ փոփոխություններ անհրաժեշտ են հանրային ընկալման տեսանկյունից: Այստեղ, սակայն, առաջանում է կարեւոր հարց՝ խոսքը բովանդակային փոփոխությունների՞ մասին է, թե՞ պարզապես կադրային վերադասավորումների: Եթե կառավարության առանցքային ուղղություններն ու պատասխանատուները հիմնականում պահպանվեն, ապա դժվար է խոսել նոր քաղաքական էջի բացման մասին: Այդ դեպքում փոփոխությունները կարող են ավելի շատ ծառայել արտաքին տպավորություն ստեղծելուն, քան իրական վերափոխումներին:

Մինչ իշխանական թիմում քննարկումներն ընթանում են, վերջնական որոշումները կայացնելու է անձամբ Նիկոլ Փաշինյանը: Եւ հենց այդ հանգամանքն է, որ իշխանական համակարգում ստեղծում է սպասման ու անորոշության մթնոլորտ: Ովքեր կպահպանեն իրենց պաշտոնները, ովքեր կհեռանան, եւ ովքեր անսպասելիորեն կհայտնվեն նոր կառավարության կազմում՝ այս հարցերի պատասխանները, ըստ ամենայնի, հայտնի կդառնան միայն այն ժամանակ, երբ Փաշինյանը կատարի իր վերջին ընտրությունը:

Մինչ այդ իշխանական ճամբարում բոլորը սպասում են մեկ մարդու որոշմանը, իսկ քաղաքական դաշտում արդեն խոսում են հնարավոր անակնկալների մասին, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ նոր կառավարության վերջնական պատկերի վրա:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԿՈՉ ԵՆ ԱՆՈՒՄ ՀԱՐԳԵԼ

ԵՄ-ն հայտարարություն է տարածել, որում ասվում է. «Մենք կոչ ենք անում ՀՀ բոլոր քաղաքական դերակատարներին հարգել քվեարկության արդյունքները, ժողովրդավարական ընթացակարգերը եւ օգտվել իրավական մեխանիզմներից՝ ցանկացած ընտրական բողոք հասցեագրելու համար»: «Նախընտրական քարոզարշավը եւ քվեարկությունը տեղի են ունեցել ՌԴ-ի կողմից աննախադեպ միջամտության, ճնշումների եւ շարունակական հիբրիդային հարձակումների համատեքստում: Այնուամենայնիվ, ընտրություններն արտացոլում են ՀՀ-ի ժողովրդավարական դիմակայունությունը: Դրանք նաեւ ընդգծեցին հայ ժողովրդի հավատարմությունը եվրոպական արժեքներին, խաղաղ քաղաքական մասնակցությանը եւ կայուն, անվտանգ ու բարեկեցիկ ապագայի ձգտմանը»,- գրված է հաղորդագրության մեջ:

97.2 ՏՈԿՈՍ

«Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության 2025 թվականի ֆինանսավորումը կազմել է 105,7 միլիարդ դրամ, իսկ կատարողականը՝ 97,2 միլիարդ դրամ կամ շուրջ 97.2 տոկոս»: Այս մասին ԱԺ պաշտպանության եւ անվտանգության հարցերի, ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստում հայտարարել է ՀՀ ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը: Նրա խոսքով՝Ներքին գործերի նախարարությունը, ըստ էության, իրականացնում է 6 ծրագիր եւ 24 միջոցառում: Վահե Հովհաննիսյանը նաեւ մանրամասնել է, որ ՆԳՆ-ի ծրագրերից 4-ն ունի բարձր կատարողական, 1 ծրագիր՝ բավարար կատարողական եւ 1 ծրագիր ունի 50 տոկոսից ցածր կատարողական: Հովհաննիսյանի բնորոշմամբ՝ նախորդ տարվա համեմատությամբ առկա է 7 միլիարդ 657 միլիոն դրամի ավելի բյուջե:

ՀՆԱՐԱՎՈՐԻՆՍ ԱՐԱԳ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը խոսել է Գյումրու թաղամասերի եւ բակերի մասին: «Ես, անկեղծ ասեմ, այն, ինչ տեսա Գյումրու թաղամասերում, ինձ համար անսպասելի էր եւ նաեւ, ինչ-որ տեղ, շոկային ազդեցություն: Ես չէի կարող պատկերացնել, որ այն երկրում, որտեղ ես վարչապետ եմ, մասնավորապես՝ Հիսունութ թաղամասում, կարող են լինել այդպիսի վիճակում գտնվող բակեր, փողոցներ, որոնք խայտառակ տեսարաններ են», - ասել է վարչապետը: Նրա խոսքով՝ Գյումրիում պետք է հնարավորինս արագ կայանան արտահերթ ընտրություններ. «Բայց, մինչեւ այդ, թեկուզ շրջանցելով տեղական ինքնակառավարման մարմինները, մենք պետք է այնտեղ արագ գործողություններ իրականացնենք՝ այսօրվանից սկսած», - ասել է նա:

ԵՄ–ՈՒՄ ՔՆՆԱՐԿՈՒՄ ԵՆ

Եվրամիությունը քննարկում է ռուսական նավթի նկատմամբ գործող գնային սահմանաչափի պահպանման տարբերակը: Reuters-ի փոխանցմամբ՝ առաջարկվում է առաջիկա վեց ամիսների ընթացքում պահպանել առավելագույն շեմը՝ մեկ բարելի դիմաց 44,1 դոլարի մակարդակում: Այս սահմանաչափը կիրառվում է այն նպատակով, որպեսզի ռուսական նավթ տեղափոխող տանկերները կարողանան պահպանել ապահովագրական ծառայություններից օգտվելու իրավունքը: Ցուցանիշը հաշվարկվում է Բալթիկ եւ Սեւ ծովի նավահանգիստներում Urals տեսակի նավթի FOB արժեքի հիման վրա՝ Platts եւ Argus գործակալությունների տվյալներով: Վերջին անգամ այն սահմանվել էր 2026 թվականի փետրվարի 1-ին: Բացի այդ, Եվրամիությունում քննարկվում է նաեւ այսպես կոչված «ստվերային նավատորմի» նկատմամբ սահմանափակումների խստացումը: Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լայենի խոսքով՝ նոր պատժամիջոցների ցանկում նախատեսվում է ավելացնել եւս 30 նավ՝ արդեն գործող սահմանափակումների տակ գտնվող 632 նավերից բացի:

ԻՐԱՎԱԿԱՆ

ՆՈՐ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

ԱՌԱՆՑ ՔՆՆՈՒԹՅԱՆ, ԲԱՅՑ ՓՈՐՁԱՇՐՋԱՆՈՎ

ArmLur.am-ի լավատեղյակ աղբյուրները փոխանցում են, որ հունիսի 12-ին Ազգային Ժողովի պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովում քննարկվելու է «Ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովման մասին» օրենքում փոփոխությունների նախագիծը, որը կներկայացնի ՀՀ ներքին գործերի նախարար Արփինե Սարգսյանը:

Նախագծով առաջարկվում է էականորեն փոխել վարորդական իրավունքից զրկված անձանց վարելու իրավունքի վերականգնման գործող կարգը:

Ներկայումս վարորդական իրավունքից զրկման ժամկետի ավարտից հետո բոլոր քաղաքացիները, անկախ նրանից՝ առաջին անգամ են զրկվել իրավունքից, թե ոչ, պարտավոր են կրկին հանձնել որակավորման քննություններ: Սակայն ՆԳ նախարարությունը կարծում է, որ նման մոտեցումը բավարար չափով չի նպաստում վարորդների վարքագծային փոփոխությանը:

Նախարարության հիմնավորմամբ՝ միջազգային փորձը ցույց է տալիս, որ բազմաթիվ երկրներում վարորդական իրավունքից զրկված անձանց նկատմամբ կիրառվում են այլ մեխանիզմներ՝ լրացուցիչ դասընթացներ, վերապատրաստումներ, ալկոհոլի վերահսկման սարքերի տեղադրում, սահմանափակ փորձաշրջաններ եւ այլ միջոցներ, որոնք ավելի արդյունավետ են վարորդի պատասխանատվության բարձրացման տեսանկյունից:

Այս համատեքստում առաջարկվում է ներդնել նոր համակարգ, որի համաձայն՝ վարորդական իրավունքից առաջին անգամ զրկված անձը կկարողանա այն վերականգնել առանց քննություն հանձնելու, եթե զրկման ժամկետի ավարտից հետո մեկ տարվա ընթացքում դիմի համապատասխան մարմնին:

Սակայն նման վերականգնումը կլինի որոշակի պայմաններով: Մասնավորապես, վարորդական իրավունքը մեկ անգամ կվերականգնվի առանց քննության, քաղաքացին կվճարի 50 հազար դրամ պետական տուրք, նրա համար կսահմանվի մեկ տարվա փորձաշրջան, գործող 13 տուգանային միավորի փոխարեն նրան կտրամադրվի ընդամենը 6 միավոր: Եթե փորձաշրջանի ընթացքում վարորդը սպառի իրեն հատկացված 6 տուգանային միավորը, ապա կրկին կզրկվի տրանսպորտային միջոց վարելու իրավունքից՝ մեկ տարի ժամկետով:

Նախագծով նախատեսվում է, որ վարորդական իրավունքից երկրորդ կամ հաջորդ անգամ զրկված անձինք նախկինի պես իրավունքները կկարողանան վերականգնել միայն որակավորման քննություններ հանձնելուց հետո:

Միաժամանակ առաջարկվում է անցումային դրույթ, որի համաձայն՝ 2020 թվականի հունվարի 1-ից հետո վարորդական իրավունքից զրկված քաղաքացիները եւս մեկ անգամ հնարավորություն կունենան օգտվել նոր կարգավորումից: Նրանք նույնպես կկարողանան առանց քննության վերականգնել իրենց իրավունքները՝ վճարելով սահմանված պետական տուրքը եւ մեկ տարվա ընթացքում գտնվելով 6 տուգանային միավորով փորձաշրջանում:

Նշվում է նաեւ, որ փոփոխությունները տարածվելու են միայն ՀՀ ոստիկանության կողմից կիրառված վարորդական իրավունքից զրկումների վրա: Դրանք չեն վերաբերի դատարանների կամ օտարերկրյա պետությունների իրավասու մարմինների կողմից կիրառված զրկումներին, ինչպես նաեւ առողջական կամ այլ իրավական հիմքերով վարելու իրավունքի դադարեցման դեպքերին:

ՆԳ նախարարությունը վստահ է, որ նոր կարգավորումների ներդրումը հնարավորություն կտա ձեւավորել վարորդական իրավունքի վերականգնման ավելի ճկուն եւ նպատակային համակարգ՝ կենտրոնանալով ոչ թե միայն պատժի, այլեւ վարորդների վարքագծի փոփոխության եւ վերահսկվող վերաինտեգրման վրա:

Հիշեցնենք, որ նախընտրական քարոզարշավի ժամանակ Նիկոլ Փաշինյանը վարորդական իրավունքից զրկվածներին խոստացել էր հարցը լուծել:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՀԱՆՁՆՈՒՄՆԵՐ

Ոստիկանության ծառայողների բացատրական աշխատանքի շնորհիվ բնակչության կողմից շարունակվում են ապօրինի պահվող զենք-զինամթերքի կամավոր հանձնումները: Համայնքային ոստիկանության Մետրոպոլիտենի բաժնի ծառայողների բացատրական աշխատանքի արդյունքում հունիսի 2-ին Ոստիկանություն զանգած քաղաքացին հայտնել էր, որ զենք-զինամթերք է թողել Հերացու փողոցի հարակից կիսաքանդ շինության մուտքի մոտ: Նշված վայրում հայտնաբերվել են 2 հրացան, ինքնաշեն ատրճանակ, 3 նռնակ, տարբեր տրամաչափի 500 փամփուշտ եւ այլ զինամթերք: Ապօրինի պահվող զենք-զինամթերք է կամավոր հանձնվել նաեւ Համայնքային ոստիկանության Ավանի բաժնի ծառայողների բացատրական աշխատանքի արդյունքում: Ոստիկանություն զանգած քաղաքացին զենք-զինամթերք էր թողել Աճառյան փողոցի հարակից կիսաքանդ շինությունում: Համայնքային ոստիկանները նշված վայրում հայտնաբերել են ինքնաձիգ, 2 նռնակ, պայթուցիչ, տարբեր տրամաչափի 215 փամփուշտ: ՆԳՆ ոստիկանությունը հավաստիացնում է, որ ապօրինի պահվող զենք-զինամթերքի հայտնաբերման ու առգրավման աշխատանքները շարունակվելու են առավել հետեւողականությամբ եւ հորդորում է՝ քրեական պատասխանատվությունից խուսափելու համար կամավոր հանձնել ապօրինի պահվող զենք-զինամթերքը:

377 ՈՉ ՍԹԱՓ ՎԱՐՈՐԴ

Հունիսի 1-ից 8-ը մայրաքաղաքում իրականացված ծառայության ընթացքում Երեւանի պարեկները հայտնաբերել են ճանապարհային երթեւեկության կանոնների 4313 խախտում՝ պահպանվող հատուկ տարածք տեղափոխելով 167 ավտոմեքենա: Մասնավորապես, հայտնաբերվել է ոչ սթափ 138 վարորդ, առանց վարորդական իրավունքի վկայականի՝ 113 անձ: Հայտնաբերվել է հաշվառման համարանիշի հետ կապված՝ 16, չամրակապված վարելու՝ 576, առանց մանկական նստատեղի՝ քարսիթի՝ 28, վարելու ընթացքում ծխելու՝ 509, վարելիս հեռախոսից օգտվելու՝ 271, հետիոտնի՝ ոչ սահմանված վայրով անցնելու՝ 77 եւ 1665 այլ իրավախախտում: 97 մեքենա շահագործվել է առանց ԱՊՊԱ պայմանագրի, 137-ը՝ տեխնիկական զննություն չանցած, 114-ը՝ լուսարձակների անսարքությամբ, 26-ը՝ թաղանթապատված դիմապակիով եւ կողային ապակիներով: Բացի այդ, տարբեր կասկածանքներով ձերբակալվել ու Համայնքային ոստիկանության բաժիններ է տարվել 85 անձ: Նույն ժամանակահատվածում մարզերում պարեկները հայտնաբերել են ճանապարհային երթեւեկության կանոնների 16078 խախտում՝ պահպանվող հատուկ տարածքներ տեղափոխելով 277 տրանսպորտային միջոց: Հայտնաբերվել է ոչ սթափ 239 վարորդ, առանց վարորդական իրավունքի վկայականի՝ 453 անձ: Հայտնաբերվել է նաեւ հաշվառման համարանիշի հետ կապված՝ 102, չամրակապված վարելու՝ 4543, առանց մանկական նստատեղի՝ քարսիթի՝ 314, վարելու ընթացքում ծխելու՝ 676, վարելիս հեռախոսից օգտվելու՝ 796, հետիոտնի՝ ոչ սահմանված վայրով անցնելու՝ 50, արագության գերազանցման՝ 2345 եւ 4666 այլ իրավախախտում: 251 ավտոմեքենա շահագործվել է առանց ԱՊՊԱ պայմանագրի, 962-ը՝ տեխնիկական զննություն չանցած, 371-ը՝ լուսարձակների անսարքությամբ, 263-ը՝ թաղանթապատված դիմապակիով եւ կողային ապակիներով: 16 վարորդ տուգանվել է վարելիս նվագարկչի՝ ստանդարտին չհամապատասխանող լրացուցիչ ուժեղացուցիչներ օգտագործելու համար: Բացի այդ, տարբեր կասկածանքով ձերբակալվել ու Համայնքային ոստիկանության տարածքային բաժիններ է տարվել 39 անձ:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ԱՋԱՏ ԱՐՁԱԿՎԵՑ

ArmLur.am-ի տեղեկությունների համաձայն՝ Զվարթնոց օդանավակայանում ձերբակալված Հովհաննես Սահակյանին մոտ 3 ժամ քննելուց հետո մեղադրանք են առաջադրել եւ խափանման միջոց ընտրել բացակայելու արգելքը: Հիշեցնենք, որ «Շանթ»-ի հետ զրույցում ընտրությունների առիթով Երեւան ժամանած Հովհաննես Սահակյանը հայտնել էր, որ Մոսկվայից եկել են մասնակցելու քվեարկությանը եւ նույն օրը պատրաստվում են վերադառնալ: «Մոսկվայից եկել ենք ընտրենք, երեկոյան 7-ին հետ ենք վերադառնում»,- ասել էր նա: Լրագրողի՝ «Նո՞ւյն օրը» հարցին արձագանքելով՝ Սահակյանը նշել էր. «Անպայման, որ կարող ա խառնվի վիճակը, երեխեքի հետ ենք, չմնանք էլի բարդություններին»: Ավելի ուշ, երբ Սահակյանը փորձել է վերադառնալ Մոսկվա, հենց օդանավակայանում ձերբակալվել է: ArmLur.am-ի հարցմանն ի պատասխան՝ ՀՀ քննչական կոմիտեից հայտնել են, որ կոմիտեում ստացված առերեւույթ հանցանքի մասին հաղորդման համաձայն՝Հ. Ս.-ն, ըստ նախնական տվյալների, տեղեկացված լինելով նախապատրաստվող հանցագործության մասին, այդ մասին չի հայտնել ՀՀ իրավասու մարմիններին: Հաղորդման հիման վրա ՀՀ քննչական կոմիտեի պետության, սահմանադրական կարգի հիմունքների եւ հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչությունում նախաձեռնվել է քրեական վարույթ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 473-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով (հանցագործության մասին չհայտնելը): Քննիչի որոշմամբ Հ. Ս.-ն ձերբակալվել է: Նախաքննությունը շարունակվում է:

Ք. Մ.

ԿԱՍԵՑՎԵԼ Է

Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կողմից «Դումիկյան եղբայրներ» ՍՊ ընկերությանը պատկանող պանրի արտադրամասում (Լոռու մարզ, քաղաք Տաշիր, Երեւանյան փողոց) իրականացված ստուգման ընթացքում պարզվել է, որ խախտվել են Մաքսային Միության տեխնիկական կանոնակարգի պահանջները, մասնավորապես՝

- արտադրամասերը սարքավորված չեն եղել ձեռքերը լվանալու համար նախատեսված լվացարաններով,
- չեն եղել բնական եւ մեխանիկական օդափոխության միջոցներ,
- հատակների, պատերի մակերեւույթները պատրաստված չեն եղել անջրանցիկ, լվացվող, ախտահանվող նյութերից,
- առաստաղները պատրաստված չեն եղել այնպես, որպեսզի կանխարգելվի կեղտի կուտակումը, բորբոսի առաջացումը, առաստաղից մասնիկների թափվելու հնարավորությունը, դռները հարթ չեն եղել,
- սննդամթերքի հետ անմիջական շփման մեջ գտնվող սարքավորումները, գործիքները, պարագաները չեն ենթարկվել պատշաճ մաքրման եւ ախտահանման, չեն պահվել նորոգ եւ բարվոք վիճակում:

Տեսչական մարմնի ղեկավարի որոշմամբ՝ պանրի արտադրամասի արտադրական գործունեությունը կասեցվել է, արձանագրված խախտումները վերացնելու համար սահմանվել է վերջնաժամկետ:

● Հունիսի 5-ից 8-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է 26 դեպք՝ թմրանյութի հայտնաբերման:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ԿԱՐԿԱՏԱՆՆԵՐ

2025թ.-ին պետբյուջեի ֆինանսավորմամբ վերանորոգվեց Հայաստան-Վրաստան միջպետական ավտոճանապարհի Ոսկեպար-Բաղանիս հատվածը: Ճանապարհի նորոգման աշխատանքներն իրականացրեց Թումանյանի ճանապարհների շինարարության եւ շահագործման ձեռնարկությունը: Սակայն Ադրբեջանի հետ սահմանի դեմ-դիմաց գտնվող այդ ճանապարհի նորոգումն արվեց վատ որակով: Տեղացի վարորդներն ասում էին, որ Թումանյանի ՃՇՇՁ-ն ճանապարհի նորոգման մեջ օգտագործել է այլ տեխնոլոգիա, սկզբից ճանապարհի ծածկին ավազ, մանրահատիկ քարեր են փռել, որից հետո կատարել ասֆալտապատումը: Սակայն լրագրողիս հետ զրույցում Թումանյանի ՃՇՇՁ տնօրեն Մուկուչ Տիտանյանը ժխտեց, որ իրենք ավտոճանապարհի վերանորոգման գործում այլ տեխնոլոգիա են կիրառել: Միջպետական ավտոճանապահի այդ հատվածի վերանորոգումն արվեց վատ որակով, որից հետո կապալառու կազմակերպությունը այն նորից նորոգեց, սակայն այս անգամ՝ սեփական ֆինանսների հաշվին: Հիմա կրկնակի վերանորոգված այդ ճանապարհին ասֆալտի կարկատաններ կան, որոնք ժամանակի ընթացքում ասֆալտի ծածկի քայքայման, ճանապարհի շարքից դուրս գալու պատճառ են դառնալու: Վարչապետ Նիկոլ Փաշինյանը սիրում է խոսել, հպարտանալ պետբյուջեի եւ միջազգային ֆինանսական կազմակերպությունների տրամադրած վարկային միջոցներով կառուցված, վերանորոգված ճանապարհներով, սակայն շատ դեպքերում այդ ճանապարհները կառուցվում, նորոգվում են վատ որակով:

ԿԱՌՈՒՑՎԱԾ ՉԷ

Նիկոլ Փաշինյանի կողմից անոնս արված հայ-ադրբեջանական սահմանազատման շարունակության դեպքում առաջիկայում Ադրբեջանին կարող է հանձնվել ԽՍՀՄ ժամանակ անկլավ հանդիսացած Վերին Ոսկեպարը, Կիրանց-Ոսկեպար ճանապարհի առանձին հատվածներ: Այդ դեպքում դժվարություններ կառաջանան Իջեւան-Նոյեմբերյան տրանսպորտային կապի համար: Այդ ճանապարհի այլընտրանքային ուղին Ենոքավան-Կարմիրգյուղ ճանապարհն է, որի միայն մի փոքր մասն է պատրաստ: Այդ առթիվ տեղեկատվական հարցումիս Տավուշի մարզպետարանից պատասխանել են. «2024թ. ՀՀ պետական բյուջեի ծրագրով ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության պատվիրատվությամբ իրականացվել են՝ 6.3 կմ երկարությամբ՝ (Մ-4) - Ենոքավան-Կարմիրգյուղ (գյուղատեղի) - (Հ-58) հանրապետական նշանակության ավտոճանապարհի (Ենոքավան տանող) հատվածի հիմնանորոգման աշխատանքները: Աշխատանքներն իրականացրել է «Ճանապարհ» ՍՊԸ-ն: Հանձնված է շահագործման: Այն համարվում է Մ-4-Ենոքվան-Կարմիր գյուղ-Հ-58 ճանապարհի սկզբնամաս, մնացած՝65.5 կմ հատվածի վերականգնման համար լիազոր մարմնի կողմից հաստատված ծրագիր չկա»: 6.3 կմ հատվածի հիմնանորոգումից անցել է 2 տարի, սակայն այդ ճանապարհի շարունակությունը կառուցված չէ:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ

ՈՎՔԵ՞Ր ԵՆ ՇՆՈՐՀԱՎՈՐԵԼ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻՆ

Հայաստանում հունիսի 7-ին կայացած Ազգային Ժողովի ընտրություններից հետո վարչապետ Նիկոլ Փաշինյանին շնորհավորական ուղերձներ են հղել տարբեր երկրների ղեկավարներ, ինչպես նաեւ եվրոպական կառույցների բարձրաստիճան պաշտոնյաներ: ArmLur.am-ը փորձել է ամփոփել, թե ովքեր են շնորհավորել Փաշինյանին եւ ինչ ուղերձներ են հղել նրան:

Կանադայի վարչապետ Մարկ Քարնի

Կանադայի վարչապետը շնորհավորել է Նիկոլ Փաշինյանին ընտրություններում հաղթանակի առիթով՝ ընդգծելով երկկողմ հարաբերությունների զարգացման կարեւորությունը: «Անհամբեր սպասում եմ մեր երկրների միջեւ գործընկերությունը խորացնելու եւ մեր երկու ժողովուրդների համար բարգավաճում ստեղծելու ուղղությամբ համատեղ աշխատանքը շարունակելուն»:

Ռումինիայի նախագահ Նիկուշոր Դան

Ռումինիայի նախագահը նշել է Հայաստանի եւ Ռումինիայի միջեւ առկա երկարամյա բարեկամական կապերը: «Շնորհավորում եմ, վարչապետ Նիկոլ Փաշինյան, ընտրություններում տարած հաղթանակի կապակցությամբ: Ռումինիան եւ Հայաստանը կապված են երկարամյա բարեկամությամբ, եւ ես անհամբեր սպասում եմ մեր գործընկերության հետագա ամրապնդմանը»:

Խորվաթիայի վարչապետ Անդրեյ Պլենկովիչ

Խորվաթիայի վարչապետը վերահաստատել է իր երկրի աջակցությունը Հայաստանի բարեփոխումներին եւ եվրոպական ինտեգրման գործընթացին: «Շնորհավորում եմ վարչապետ Նիկոլ Փաշինյանին ընտրություններում հաղթանակի առիթով: Ես անհամբեր սպասում եմ մեր համագործակցության շարունակմանը եւ Խորվաթիայի եւ Հայաստանի միջեւ հարաբերությունների հետագա ամրապնդմանը: Խորվաթիան վճռականորեն աջակցում է Հայաստանի բարեփոխումների ջանքերին եւ Եվրամիության հետ նրա խորացող գործընկերությանը, որը հիմնված է ժողովրդավարության, կայունության եւ բարգավաճման նկատմամբ մեր համատեղ հանձնառության վրա»:

ԱՄՆ պետքարտուղար Մարկո Ռուբիո

ԱՄՆ պետքարտուղարը շնորհավորել է Նիկոլ Փաշինյանին՝ նրա կուսակցության վերընտրման կապակցությամբ եւ ընդգծել խաղաղության օրակարգի կարեւորությունը: «Շնորհավորում եմ վարչապետ Նիկոլ Փաշինյանին՝ իր կուսակցության վերընտրման առթիվ: Միացյալ Նահանգները կանգնած է վարչապետ Փաշինյանի եւ Հայաստանի կողքին խաղաղության ամրապնդման գործում, եւ մենք հանձնառու ենք առաջ մղելու Վաշինգտոնում տեղի ունեցած պատմական խաղաղության գագաթնաժողովի նպատակները, ներառյալ Միջազգային խաղաղության եւ բարգավաճման Թրամփի ուղու (TRIPP) իրականացումը: Մենք անհամբեր սպասում ենք համատեղ աշխատանքին Հարավային Կովկասում եւ դրանից այն կողմ խաղաղություն, կայունություն եւ բարգավաճում ապահովելու համար»:

Վրաստանի վարչապետ Իրակլի Կոբախիձե

«Սրտանց շնորհավորում եմ վարչապետ Նիկոլ Փաշինյանին՝ ընտրություններում իր կուսակցության հաջողության կապակցությամբ: Անհամբեր սպասում եմ մեր սերտ համագործակցության շարունակությանը՝ Վրաստանի եւ Հայաստանի միջեւ ռազմավարական գործընկերությունն ու բարեկամական հարաբերությունները ամրապնդելու համար»:

Ղազախստանի նախագահ Կասիմ-Ժոմարտ Տոկաեւ

Տոկաեւը նշել է, որ ընտրություններն անցել են բաց եւ օրենսդրությանը համապատասխան պայմաններում՝ հավելելով, որ Ղազախստանը պատրաստ է շարունակել ակտիվ համագործակցությունը Հայաստանի հետ:

Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոն

«Ընդունեք իմ սրտանց շնորհավորանքները այս համոզիչ հաղթանակի առիթով: Ես ուրախ եմ շարունակել աշխատել Ձեզ հետ՝ խաղաղությունն ու Հայաստանի ինքնիշխանությունը սատարելու համար»:

Գերմանիայի կանցլեր Ֆրիդրիխ Մերց

«Չնայած հսկայական ճնշմանը՝ Հայաստանի ժողովուրդը հստակորեն ընտրել է ժողովրդավարությունն ու խաղաղությունը»:

Իրանի նախագահ Մասուդ Փեզեշքիան

Փեզեշքիանը բարձր է գնահատել ընտրությունների անցկացումը եւ նշել, որ հայ ժողովրդի աջակցությունը Փաշինյանի կառավարությանը վկայում է խաղաղության, զարգացման եւ տարածաշրջանային համագործակցության քաղաքականության շարունակության մասին:

Ուկրաինայի նախագահ Վոլոդիմիր Զելենսկի

«Սա նաեւ հաղթանակ է Հայաստանի ինքնիշխանության, ձեր անկախության եւ ձեր ընտրած ճեւով ապրելու ձեր իրավունքի համար»:

Հնդկաստանի վարչապետ Նարենդրա Մոդի

«Այս մանդատը նորովի արտացոլում է հայ ժողովրդի անսասան հավատն ու վստահությունը Ձեր առաջնորդության եւ տեսլականի նկատմամբ»:

Մոլդովայի նախագահ Մայա Սանդու

«Սրտանց շնորհավորում եմ Նիկոլ Փաշինյանին ընտրություններում տարած հաղթանակի առիթով: Մոլդովան եւ Հայաստանը կիսում են Եվրոպայում խաղաղության եւ կայունության հանձնառությունը»:

Լեհաստանի վարչապետ Դոնալդ Տուսկ

«Նիկոլ Փաշինյանը հաղթեց: Հայաստանը ընտրեց շարունակականությունը եւ հաստատեց իր եվրոպամետ ուղղությունը»:

Շվեդիայի վարչապետ Ուլֆ Կրիստերսոն

Նա նշել է, որ անհամբեր սպասում է Հայաստանի հետ համագործակցության խորացմանն ու տարածաշրջանային խաղաղության գործընթացին աջակցության շարունակմանը:

Իսպանիայի վարչապետ Պեդրո Սանչես

«Հայ ժողովուրդն ընտրել է ժողովրդավարությունը, կայունությունը եւ Եվրոպային ավելի ու ավելի մոտ ապագան»:

Ավստրիայի կանցլեր Քրիստիան Շտոկեր

Նա նշել է, որ Հայաստանի ժողովուրդը վերահաստատել է իր հանձնառությունը ժողովրդավարական ուղուն եւ երկրի ինքնիշխանության ամրապնդմանը:

Հունաստանի վարչապետ Կիրիակոս Միցոտակիս

«Հունաստանը հույս ունի ամրապնդել մեր երկու բարեկամ երկրների միջեւ ընդհանուր արժեքների վրա հիմնված սերտ համագործակցությունը»:

Նիդերլանդների վարչապետ Ռոբ Յետտեն

Նա հայտարարել է, որ ընտրությունների արդյունքները հաստատում են տարածաշրջանային խաղաղության եւ ԵՄ-Հայաստան համագործակցության ընդլայնման օրակարգը:

Լատվիայի նախագահ Էդգարս Ռինկեւիչս

«Հայաստանն ընտրել է իր սեփական ժողովրդավարական ուղին: Լատվիան ամուր կանգնած է ձեր կողքին»:

Էստոնիայի վարչապետ Քրիստեն Միխալ

«Հայաստանը շարունակում է ընտրել Եվրոպան, եւ Էստոնիան հպարտ է աջակցել Ձեր եվրոպական ձգտումներին»:

Լիտվայի վարչապետ Ինգա Ռուգինիենե

Նա նշել է, որ Հայաստանի ժողովուրդը կրկին արտահայտվել է ժողովրդավարական արժեքների եւ եվրոպական ապագայի օգտին:

Եվրոպական կառույցների ղեկավարները

Փաշինյանին շնորհավորել են նաեւ Ուրսուլա ֆոն դեր Լայեն, Անտոնիու Կոշտա, Ռոբերտա Մեցոլա եւ Մարթա Կոս: Նրանց ուղերձներում հիմնական շեշտադրումները վերաբերում էին Հայաստանի ժողովրդավարական զարգացմանը, խաղաղության օրակարգին, ինքնիշխանությանը եւ Եվրամիության հետ հարաբերությունների խորացմանը:

Հատկանշական է, որ շնորհավորական ուղերձների գերակշիռ մասը Հայաստանի ընտրությունների արդյունքները կապել է ժողովրդավարության, ինքնիշխանության, խաղաղության եւ եվրոպական ինտեգրման գործընթացների հետ՝ ընդգծելով Երեւան-Բրյուսել հարաբերությունների խորացման հեռանկարը:

ՄՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

● *Ըստ վիճակագրական տվյալների՝ հունիսի 5-ից 8-ը գրանցվել է զենք-զինամթերք կամավոր հանձնելու 3 դեպք:*

ԼՈՒՐԵՐ

6 ՏԱՐԵԿԱՆ Է

Վեց տարի, շուրջ 45 հիմնադրամ, 55-ից ավել ծրագիր, 300 մլն դրամի հասնող բյուջե: Սրանք պարզապես թվեր չեն, այլ համատեղ ուժի, վստահության եւ ամուր գործընկերության վառ արտացոլանք: IDBank-ի եւ Իդրամի համատեղ այս նախաձեռնությունն իր գոյության առաջին իսկ օրերից բախվել է մի շարք մարտահրավերների՝ համավարակ, պատերազմ եւ այլն: Սակայն դժվարությունները դարձել են նոր հնարավորություններ՝ օգնելու, աջակցելու, կրթելու, բուժելու, ստեղծելու եւ փոխելու կյանքեր: Իր գոյության վեց տարիների ընթացքում «Մի դրամի ուժի» շնորհիվ կյանքի են կոչվել բազմաթիվ կարեւոր ծրագրեր, որոնք ընդգրկված են 8 հիմնական ուղղություններում.

- Ֆինանսական գրագիտություն,
- Թվային գրագիտություն,
- Մարզերի զարգացում,
- ՓՄՁ-ների զարգացում,
- Բնապահպանություն,
- Ներառականություն,
- Աշխատակիցների իրավունքների պաշտպանություն,
- Սոցիալական աջակցություն:

Հաջողված համագործակցությունները շատ են, իսկ նպատակը՝ մեկը. համախմբվել մեկ գաղափարի շուրջ եւ միասնական ուժերով անհնարինը դարձնել հնարավոր:

«Մի դրամի ուժը» շարունակում է իր գործունեությունը՝ դառնալով վստահության, միասնականության եւ պատասխանատվության կարեւոր հարթակ: Նախաձեռնության պատմության ամեն նոր փուլ սկսվել եւ սկսվում է նույն համոզմամբ՝ փոքր քայլերը ձեւավորում են մեծ փոփոխություններ: Ու քանի դեռ կա այդ հավատը, «Մի դրամի ուժի» պատմությունը շարունակվելու է, որովհետեւ ամեն ինչ սկսվում է մի դրամից:

Ընկերությունները վերահսկվում են ՀՀ ԿԲ կողմից (Գ)

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սույնով տեղեկացնում ենք, որ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ մասնաճյուղային ցանցի օպտիմալացման նպատակով՝ 2026 թվականի հունիսի 16-ից դադարում է բանկի «Օպերա» մասնաճյուղի (հասցե՝ ՀՀ, ք. Երեւան, Մաշտոցի պողոտա 42 շենք, 17/1) գործունեությունը: «Օպերա» մասնաճյուղի բոլոր գործառույթները կշարունակվեն իրականացվել «Սայաթ-Նովա» մասնաճյուղում (հասցե՝ ՀՀ, ք. Երեւան, Սայաթ-Նովա 8 շենք, 21/1 տարածք եւ Աբովյան 22 շենք, թիվ 1/1 տարածք):

2026 թվականի հունիսի 16-ից դադարում է բանկի «Անի» մասնաճյուղի (հասցե՝ ՀՀ, ք. Գյումրի, Անի թաղամաս, 7-րդ փողոց, 5/2) գործունեությունը: «Անի» մասնաճյուղի բոլոր գործառույթները կշարունակվեն իրականացվել «Շիրակ» մասնաճյուղում (հասցե՝ ՀՀ, ք. Գյումրի, Աբովյան փ. 256):

Բոլոր մասնաճյուղերում հաճախորդները կշարունակեն ստանալ լիարժեք սպասարկում՝ օգտվելով բանկի կողմից առաջարկվող բոլոր ծառայություններից:

Շնորհակալություն ենք հայտնում «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ ծառայություններից օգտվելու համար:

Հարգանքով՝ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ

ԱՄԵՐԻԱԲԱՆԿ

ԿՆՔԵԼ ԵՆ 120 ՄԻԼԻՈՆ ԵՎՐՈՅԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Ամերիաբանկը եւ Նիդերլանդների ձեռնարկատիրական զարգացման բանկը (FMO) ՎԶԵԲ-ի՝ Ռիգայում (Լատվիա) կայացած տարեկան ժողովի ժամանակ կնքել են 120 միլիոն եվրոյի վարկային պայմանագիր: Պայմանագրի նպատակն է ընդլայնել ֆինանսավորման հասանելիությունը Հայաստանում գործող միկրո, փոքր եւ միջին ձեռնարկությունների (ՄՓՄՁ) համար եւ խթանել կայուն զարգացումը կանաչ ֆինանսավորման միջոցով:

Ֆինանսավորման առնվազն 25%-ը կհատկացվի սահմանված չափանիշներին համապատասխանող կանաչ նախագծերին: Մնացած միջոցները կուղղվեն ՄՓՄՁ-ների ֆինանսավորմանը. առանձնահատուկ ուշադրության կենտրոնում կլինեն կանանց եւ երիտասարդ ձեռնարկատերերի կողմից ղեկավարվող բիզնեսները, ինչպես նաեւ գյուղատնտեսության ոլորտում եւ գյուղական համայնքներում գործող ձեռնարկությունները:

Այս նոր պայմանագիրն արտացոլում է Ամերիաբանկի եւ FMO-ի ընդհանուր ձգտումը՝ աջակցելու ներառական տնտեսական աճին, բարձրացնելու տեղական բիզնեսների մրցունակությունը եւ նպաստելու անցմանը դեպի ավելի կայուն տնտեսություն:

Խոսելով պայմանագրի մասին՝ Ամերիաբանկի ֆինանսական ինստիտուտների բաժնի ղեկավար Արա Սարգսյանը նշեց. «Մենք ուրախ ենք ամրապնդել մեր երկարատեւ գործընկերությունը FMO-ի հետ այս գործիքի միջոցով, որն էլ ավելի կընդլայնի ֆինանսավորման հասանելիությունը ամբողջ Հայաստանում գործող ՄՓՄՁ-ների համար՝ միաժամանակ ավելացնելով աջակցությունը կանաչ եւ ներառական նախագծերին: Այս համագործակցությունը շարունակում է կարեւոր դեր խաղալ Հայաստանում կայուն աճի խթանման եւ ձեռնարկատերերի համար ավելի լայն հնարավորությունների ստեղծման գործում, որը ռազմավարական նշանակություն ունի Ամերիաբանկի համար»:

FMO-ի գործադիր տնօրեն Մայքլ Յոնգենիլը նշեց. «Մեր ներդրումն Ամերիաբանկում արտացոլում է ձեռնարկատերերին սատարելու մեր հանձնառությունը՝ միաժամանակ խթանելով արդար անցումը դեպի ցածրածխածնային եւ կլիմայական փոփոխությունների նկատմամբ ավելի դիմացկուն տնտեսություն: Կանաչ ներդրումներին զուգահեռ ընդլայնելով ՄՓՄՁ-ների համար ֆինանսավորման հասանելիությունը՝ մենք ձգտում ենք խթանել ներառական աճը եւ օգնել ապահովել, որ այս անցման օգուտից լիարժեք օգտվի ամբողջ հանրությունը»:

Ամերիաբանկի եւ FMO-ի գործընկերությունը զգալիորեն ընդլայնվել է 2009 թվականից ի վեր, երբ Ամերիաբանկն առաջին անգամ ֆինանսավորում ստացավ FMO-ից՝ հայկական ՓՄՁ-ներին եւ վերականգնվող էներգետիկայի նախաձեռնություններին աջակցելու համար: Նախորդ 17 տարվա ընթացքում FMO-ն տրամադրել է շուրջ 400 միլիոն ԱՄՆ դոլարի ֆինանսավորում: Այս միջոցները նպաստել են Հայաստանում բազմաթիվ բիզնես եւ վերականգնվող էներգիայի նախագծերի իրականացմանը՝ աջակցելով ձեռներեցությանը, նպաստելով աշխատատեղերի ստեղծմանը եւ ավելի կանաչ տնտեսության զարգացմանը:

«Ամերիաբանկ» ՓԲԸ

Ամերիաբանկը ֆինանսական եւ տեխնոլոգիական առաջատար հաստատություն է, ՀՀ տնտեսական ոլորտի նշանակալի դերակատարներից մեկը: Թվային փոխակերպման ռազմավարության ներքո բանկը շարունակաբար ներդնում եւ կատարելագործում է նորարարական պրոդուկտներ, ծառայություններ եւ հարթակներ, որոնք միտված են բավարարելու մարդկանց ֆինանսական եւ ոչ ֆինանսական կարիքները: Ամերիաբանկը, որպես դինամիկ զարգացող ֆինթեք միջավայր, առաջարկում է կյանքի որակը բարելավող ամբողջական լուծումներ:

Բանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

FMO

FMO-ն Նիդերլանդների ձեռնարկատիրական զարգացման բանկն է: Որպես առաջատար իմփաքթ-ներդրող՝ FMO-ն աջակցում է զարգացող երկրներում եւ ձեւավորվող շուկաներում մասնավոր հատվածի կայուն աճին՝ ֆինանսավորելով հավակնոտ ծրագրեր եւ նախաձեռնություններ: Համոզված լինելով, որ ուժեղ մասնավոր հատվածը նպաստում է տնտեսական եւ սոցիալական զարգացմանը՝ FMO-ն արդեն ավելի քան 50 տարի է, ինչ ֆինանսավորում է ձեռներեցներին՝ տեղական տնտեսություններն ավելի ներառական, արդյունավետ, ճկուն եւ կայուն դարձնելու համար: FMO-ն իր գործունեության համար առանձնացնում է երեք հիմնական ոլորտ, որոնք մեծ ազդեցություն ունեն զարգացման տեսանկյունից՝ ագրոբիզնես, պարենային եւ ջրային տնտեսություն, էներգետիկա եւ ֆինանսական հաստատություններ: Ունենալով մոտ 13 միլիարդ եվրոյի ներդրումային պորտֆել ավելի քան 85 երկրում՝ FMO-ն հանդիսանում է աշխարհում մասնավոր հատվածի զարգացման խոշորագույն երկկողմ բանկերից մեկը:

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք www.fmo.nl. կայքը:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՐԿ

Ֆասթ Բանկը մեկնարկել է ագրոպարենային ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորման ծրագիրը: Բանկը հնարավորություն է տալիս հաճախորդներին ձեռք բերել 1-2 միլիոն ՀՀ դրամ գումարի չափով գյուղատնտեսական վարկ եւ մարել այն 7-36 ամսվա ընթացքում:

Ագրոպարենային ոլորտին տրամադրվող գյուղատնտեսական վարկի տարեկան անվանական տոկոսադրույքը 13.15% է, փաստացի տարեկան տոկոսադրույքը՝ 13.15%-13.95%: Այնուհանդերձ, կառավարության սուբսիդավորման ծրագիրը նախատեսում է փոխհատուցել վարկի ողջ տոկոսադրույքը, ուստի հաճախորդի կողմից վճարման ենթակա վարկի տարեկան տոկոսադրույքը կկազմի 0%: Ագրոպարենային ոլորտին տրամադրվող գյուղատնտեսական վարկի համար կարող են դիմել ինչպես ֆիզիկական եւ իրավաբանական անձինք, այնպես էլ անհատ ձեռնարկատերերը: Հարկ է նշել, որ վարկային միջոցները պետք է ուղղվեն բացառապես ագրոպարենային ոլորտում գյուղատնտեսական գործունեությանը եւ ագրովերամշակմանը: Սուբսիդավորման ծրագիրն իրականացվելու է 2026-2027 թվականներին: Պետական սուբսիդավորման ծրագրով ագրոպարենային ոլորտին տրամադրվող գյուղատնտեսական վարկի դիմումներն ընդունվում են Ֆասթ Բանկի 24/7 գործող մասնաճյուղերում:

Ֆասթ Բանկը թվային բանկ դառնալուն միտված ընկերություն է, որը ներկայացված է Երեւանում եւ Հայաստանի բոլոր մարզերում:

Ֆասթ Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

GUCCI ԶԳԵՍՏՈՎ

ՔԻՄ ՔԱՐԴԱՇՅԱՆԸ ՄՈՆԱԿՈՅՈՒՄ ՓԱՅԼԵԼ Է

Ամերիկյան հեռուստաաստղ Քիմ Քարդաշյանը հերթական անգամ հայտնվել է նորաձեւության աշխարհի ուշադրության կենտրոնում: Նա Մոնակոյում անցկացված «Ֆորմուլա 1»-ի Մոնակոյի Գրան Պրիի շրջանակում ներկայացել է շքեղ Gucci զգեստով, որն ավելի վաղ կրել էր բրիտանացի լեգենդար սուպերմոդել Քեյթ Մոսը:

45-ամյա Քարդաշյանի ընտրած սեւ զգեստը Gucci-ի նոր հավաքածուից է: Այն աչքի է ընկնում երկար թեւքերով, բարձր օձիքով եւ խորը բաց մեջքով: Զգեստի ամենաուշագրավ դետալը բյուրեղներով զարդարված «G» լոգոյով թոնգն էր, որը դարձել էր ամբողջ կերպարի գլխավոր շեշտադրումը: Քարդաշյանը նախընտրել էր նվազագույն աքսեսուարներ՝ թույլ տալով, որ զգեստն ամբողջությամբ գրավի ուշադրությունը: Նրա սանրվածքն ու բնական դիմահարդարումը լրացրել էին կերպարը՝ հաղորդելով նրբագեղ եւ միաժամանակ համարձակ տեսք:

Հատկանշական է, որ այս զգեստը առաջին անգամ հանրությանը ներկայացրել էր սուպերմոդել Քեյթ Մոսը՝ փետրվարին Միլանում կայացած Gucci-ի ցուցադրության ժամանակ: Քարդաշյանի կողմից նույն զգեստի ընտրությունը նորաձեւության շրջանակներում լայն արձագանք է ստացել, քանի որ այն համարվում է բրենդի վերջին շրջանի ամենաքննարկված ստեղծագործություններից մեկը:

Քարդաշյանը Մոնակոյում էր ոչ միայն նորաձեւության, այլեւ անձնական կյանքի պատճառով: Նա ներկա էր մրցարշավին՝ աջակցելու իր ընկերոջը՝ բրիտանացի ավտոարշավորդ Լյուիս Հեմիլթոնին, որը հանդես է գալիս Ferrari-ի կազմում: Վերջին ամիսներին նրանց հարաբերությունների մասին բազմաթիվ խոսակցություններ են շրջանառվում, սակայն զույգը հիմնականում խուսափել է հրապարակային մեկնաբանություններից:

Մրցարշավից հետո Հեմիլթոնը լրագրողների հետ զրույցում առաջին անգամ բացահայտ խոսել է Քարդաշյանի մասին: Նա նշել է, որ շատ կարեւոր է իր համար սիրելի մարդու աջակցությունը նման կարեւոր մրցումների ժամանակ:

«Հիանալի է, որ նա այստեղ է եւ աջակցում է ինձ: Շատ կարեւոր է կողքիդ ունենալ մարդկանց, ովքեր հավատում են քեզ եւ ոգեւորում: Քիմն ամեն օր այդպիսի աջակցություն է ցուցաբերում ինձ»,-ասել է ավտոարշավորդը:

Ավելի վաղ աղբյուրները հայտնել էին, որ Քարդաշյանի եւ Հեմիլթոնի հարաբերությունները գնալով ավելի լուրջ բնույթ են ստանում: Ըստ մտերիմների՝ Քարդաշյանը շատ զգույշ է վերաբերվում այն մարդկանց, որոնց թույլ է տալիս մտնել իր երեխաների կյանք, ուստի այն փաստը, որ Հեմիլթոնը ժամանակ է անցկացնում նրանց հետ, վկայում է մեծ վստահության մասին:

Զույգի սիրավեպի մասին առաջին տեղեկությունները հայտնվեցին փետրվարին, երբ նրանք միասին նկատվել էին Փարիզում: Ավելի ուշ հայտնի դարձավ, որ նրանք միասին ժամանակ են անցկացրել նաեւ Տոկիոյում, որտեղ Քարդաշյանը մեկնել էր իր երեխաների՝ Նորթի, Սենթի, Չիկագոյի եւ Փսալմի հետ: Ճանապարհորդությանը մասնակցել էին նաեւ Քիմի քույրը՝ Քլոե Քարդաշյանը, եւ նրա երեխաները:

Ապրիլին Քարդաշյանը կարծես անուղղակիորեն հաստատեց հարաբերությունների մասին լուրերը՝ Instagram-ում հրապարակելով Coachella երաժշտական փառատոնից լուսանկարներ, որոնցից մեկում երեւում էր Հեմիլթոնի ճանաչելի դաջվածքներով ձեռքը: Այդ հրապարակումը մեծ քննարկումների առիթ դարձավ երկրպագուների շրջանում:

Թեեւ Քիմ Քարդաշյանն ու Լյուիս Հեմիլթոնը դեռեւս պաշտոնապես չեն հայտարարել իրենց հարաբերությունների մասին, նրանց համատեղ հայտնությունները եւ միմյանց հասցեին հնչող ջերմ խոսքերը շարունակում են հետաքրքրել հանրությանը: Իսկ Մոնակոյում Քարդաշյանի տպավորիչ կերպարը դարձավ ոչ միայն նորաձեւության, այլեւ նրանց հնարավոր սիրավեպի շուրջ քննարկումների հերթական պատճառը:

ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿԸ ԳՐՔԵՐ Է ՆՎԻՐԱԲԵՐԵԼ

Հայէկոնոմբանկը, կորոնոտիպ սոցիալական դատապարտվության շրջանակում, շարունակում է խթանել ֆինանսական գրագիտության եւ ընթերցանության մշակույթի հանրայնացումը: Կարեւորելով ազգային արժեքների եւ թումանյանական ժառանգության փոխանցումը սերունդներին՝ Հայէկոնոմբանկը 2026թ. փետրվարին Գիրք նվիրելու օրվա առթիվ մի շարք միջոցառումներ իրականացրեց:

«Նվիրում եմ գիրք գրադարանին» նախաձեռնության շրջանակում Բանկի աշխատակիցների կողմից իրականացվեց գրքերի հավաքագրում՝ սահմանամերձ համայնքային գրադարաններից մեկին նվիրաբերելու նպատակով: Ընտրվեց Տավուշի սահմանամերձ Սարիգյուղ համայնքի Համլետ Աթաբեկյանի անվան միջնակարգ դպրոցը, որտեղ ներկայում 197 աշակերտ է սովորում, իսկ աշխատակիցների քանակը հասնում է 50-ի: Հունիսի 5-ին հավաքագրված գրքերից բացի դպրոցին փոխանցվեց նաեւ Հայէկոնոմբանկի կողմից ձեռքբերված լրացուցիչ գրականություն, որի կարիքը հատկապես զգացվում է առանձին ուսումնական խմբերի հետ նպատակային ծրագրով ուսուցման ընթացքում: «Ֆինանսական գրագիտության բարձրացումն ու ընթերցանության խրախուսումը Հայէկոնոմբանկի ԿՍՊ ծրագրերի կարեւորագույն ուղղություններից են: Այս նախաձեռնությամբ մենք ցանկանում ենք ոչ միայն հարստացնել Սարիգյուղի դպրոցականների առօրյան, այլեւ հիմքեր ստեղծել ֆինանսական գրագիտության եւ ընթերցանության մշակույթի զարգացման համար», - իր խոսքում նշեց Հայէկոնոմբանկի Մարքեթինգի բաժնի պետ Արման Տոնիկյանը: Դպրոցի տնօրեն Մեսրոպ Շահնազարյանը, կարեւորելով նման նախաձեռնությունները, շնորհակալություն հայտնեց ցուցաբերած ուշադրության եւ նվիրաբերված գրքերի համար: Դպրոցում նշեցին, որ աշակերտները բավական ժամանակ են անցկացնում գրադարանում, եւ նոր ու ժամանակակից գրականության առկայությունը եւս կխթանի ընթերցանությունը դպրոցականների շրջանում:

86 86 | aeb.am

Հայէկոնոմբանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից

ՄԱՐԶԱԿԱՆ

ՆԵՅՄԱՐԸ ԿՇԱՐՈՒՆԱԿԻ

Բրազիլիայի ֆուտբոլի կոնֆեդերացիան հանդես է եկել հայտարարությամբ՝ կապված ազգային թիմի աստղային հարձակվող Նեյմարի առողջական վիճակի հետ», գրում է armsport-ը: Ինչպես հայտնի է, 34-ամյա ֆուտբոլիստը վերջերս վնասվածք էր ստացել: Տարածված հաղորդագրության մեջ նշվում է, որ բուժզննման արդյունքները դրական դինամիկա են ցույց տվել: Ֆուտբոլիստը կշարունակի վերականգնողական գործընթացը՝ հավաքականի բժշկական շտաբի կողմից մշակված ծրագրի համաձայն: Նշենք, որ հունիսի 7-ին Բրազիլիայի հավաքականը ստուգողական խաղում 2-1 հաշվով առավելության էր հասել Եգիպտոսի ընտրանու նկատմամբ: Կառլո Անչելոտիի գլխավորած թիմն աշխարհի առաջնությունում իր առաջին հանդիպումը կանցկացնի հունիսի 14-ին: «Սելեսաոյի» մրցակիցը կլինի Մարոկկոյի հավաքականը, իսկ հանդիպումը կմեկնարկի Երեւանի ժամանակով 02:00-ին:

ՀԱՍՏԱՏՈՒՄ Է ԼՈՒՐԵՐԸ

Հայաստանի ազգային հավաքականի եւ սերբական «Ցրվենա Զվեզդայի» պաշտպան Նաիր Թիկնիզյանը հայտնվել է եվրոպական առաջատար ակումբների ուշադրության կենտրոնում: Այս տեղեկությունը «Sport-Express» պարբերականի հետ զրույցում հաստատել է 27-ամյա ֆուտբոլիստի շահերը ներկայացնող գործակալ Ալեքսանդր Կլյուեւը, հայտնում է armsport-ը: Ավելի վաղ հայտնի մարզական լրագրող Էքրեմ Քոնուրը հայտնել էր, որ հայ խաղացողի ծառայություններով ակտիվորեն հետաքրքրված են իտալական «Կոմոն» եւ ֆրանսիական «Լանսը»: «Նաիրի նկատմամբ իսկապես կա հետաքրքրություն եվրոպական թոփ-5 լիգաները ներկայացնող ակումբների կողմից: Ինչ վերաբերում է Հայաստանի ազգային հավաքականի հանդիպումներին սկաուտների հնարավոր ներկայությանը, ապա այդ մասին ոչինչ ասել չեմ կարող»,-նշել է Կլյուեւը:

ՎՍՏԱՀ ՀԱՂԹԱՆԱԿ

Աշխարհի 2026 թվականի առաջնությանը նախապատրաստվող Իսպանիայի ընտրանին մրցաշարի մեկնարկից առաջ անցկացրեց վերջին ստուգողական հանդիպումը՝ 3-1 հաշվով վստահ հաղթանակ տոնելով Պերուի նկատմամբ: Հանդիպման հաշիվը շատ արագ՝ արդեն 2-րդ րոպեին, բացեց Միկել Օյարսաբալը: 32-րդ րոպեին Պեդրին կրկնապատկեց իսպանացիների առավելությունը, իսկ 53-րդ րոպեին պերուացիների դարպասապահ Պեդրո Գալեսեն դարձավ ինքնագոլի հեղինակ՝ հաշիվը դարձնելով 3-0: Պերուի հավաքականին հաջողվեց խփել միայն հեղինակության գնդակը. 66-րդ րոպեին աչքի ընկավ Ժաիրո Վելեսը: Հիշեցնենք, որ Իսպանիայի հավաքականն ընդգրկված է Մունդիալի H խմբում, որտեղ նրա մրցակիցներն են Կաբո Վերդեն, Սաուդյան Արաբիան եւ Ուրուգվայը: Աշխարհի առաջնությունը մեկնարկելու է հունիսի 11-ին եւ տեւելու է մինչեւ հուլիսի 19-ը (armsport):

● *Հ. Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոնում հունիսի 14-ին՝ 12:00-ին, կկայանա «Կամակոր ճուտիկը» ներկայացումը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Հարկադիր կատարման ենթակա ակտերն ի՞նչ ժամկետում կարող են ներկայացվել հարկադիր կատարման:

Վահան Գրիգորյան, 45 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. *(Սկիզբը՝նախորդ համարում)*

● 3. Եթե կատարման ենթակա ակտով հաստատված պարտավորությունը ենթադրում է տարաժամկետ կամ պարբերական կատարում, ապա սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հարկադիր կատարման դիմում կարող է ներկայացվել պարտավորությունների կատարման ողջ ժամկետի ընթացքում, ինչպես նաեւ պարտավորությունների կատարման համար սահմանված ժամկետի ավարտից հետո՝ մեկ տարվա ընթացքում: Ընդ որում, եթե սույն մասով նախատեսված դեպքերում հարկադիր կատարման դիմումը ներկայացվել է կատարողական վաղեմության ընթացքի առաջին տարին լրանալուց հետո, ապա հարկադիր կատարման ենթակա են հարկադիր կատարման դիմում ներկայացնելուն նախորդող մեկ տարվա ընթացքում եւ դրանից հետո չկատարված պարտավորությունները, բացառությամբ եթե դատարանը սույն օրենքի 36-րդ հոդվածով սահմանված կարգով թույլատրել է ավելի վաղ ժամանակահատվածում չկատարված պարտավորությունների հարկադիր կատարումը:

● 4. Սույն հոդվածով սահմանված՝դրամական պահանջներով կատարողական վաղեմության ժամկետները, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետների, ընդհատվում են պարտավորության մասնակի կատարմամբ: Ընդ որում՝կատարողական վաղեմության ժամկետի ընդհատման նպատակով պարտավորության մասնակի կատարումը կարող է հաստատվել միայն բանկային փոխանցումը հավաստող ապացույցով: Ընդհատումից հետո կատարողական վաղեմության ժամկետի ընթացքը նորից է սկսվում, իսկ մինչեւ ընդհատումն անցած ժամանակը չի հաշվվում նոր ժամկետի մեջ»:

Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն

Էջը՝ ՄԱՐԻԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս վերադարձնել կամ վերաձեւակերպել սխալ կամ ավել վճարված գումարները:

Գարիկ Առաքելյան, 55 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Եթե ՀՀ պետական բյուջեի գանձապետական հաշիվներին սխալ վճարում եք կատարել կամ ավելին եք վճարել, գումարի վերադարձման կամ վերաձեւակերպման նպատակով՝ կից դիմումի ձեւով, կարող եք դիմել ՀՀ ֆինանսների նախարարություն: Դիմումին կից ֆիզիկական կամ իրավաբանական անձը ներկայացնում է վճարումը հաստատող փաստաթղթերի բնօրինակները, մասնավորապես՝ անդորրագիրն ու վճարման հանձնարարագիրը: Եթե վճարումը կատարված է պետական վճարումների էլեկտրոնային համակարգի միջոցով, ապա որպես վճարումը հաստատող փաստաթուղթ կարող է հանդիսանալ վճարումների պետական էլեկտրոնային համակարգի գեներացված անդորրագիրը կամ անդորրագրի 20-նիշանոց ծածկագիրը, ինչպես նաեւ վճարված գումարը վերադարձնելու հանգամանքների հիմնավորման մասին գանձող մարմնի տեղեկանքը: Եթե չգիտեք, թե որ մարմինն է գանձում կատարել, ապա անհրաժեշտ է մուտք գործել կայքի գանձապետական հաշիվներ բաժինը, գտնել համապատասխան հաշվեհամարը, որին կից նշված է նաեւ հաշիվը տնօրինող մարմնի անվանումը: Եթե դիմումը ներկայացվում է լիազորված անձի կողմից, ապա վերադարձը կամ վերաձեւակերպումը հիմնավորող փաստաթղթերի հետ միասին անհրաժեշտ է ներկայացնել նաեւ նոտարի կողմից վավերացված լիազորագիրը: Եթե վերադարձման ենթակա գումարները վճարված են անչափահաս երեխաների անունով, ապա դիմումը ներկայացվում է ծնողներից մեկի անունով, իսկ վերադարձը հիմնավորող փաստաթղթերի հետ տրամադրվում են նաեւ ծննդյան վկայականների պատճենները:

Վերադարձման դեպքում դիմումում պետք է նշել նաեւ բանկային ռեկվիզիտները, այսինքն՝ այն բանկի եւ մասնաճյուղի անունը, որտեղից դիմողը պետք է ստանա վերադարձված գումարը եւ անձնագրի տվյալները/սերիան, ում կողմից է տրված, պատճենը/: Բանկային հաշվեհամարի առկայության դեպքում անձնագրի տվյալների ներկայացումը պարտադիր չէ: Վերաձեւակերպման դեպքում դիմումի մեջ պետք է նշել ճիշտ գանձապետական հաշվի համարը: Վերոնշյալ փաստաթղթերի առկայության դեպքում դիմողը 5-օրյա ժամկետում տեղեկացվում է գործարքը /գումարի վերադարձ կամ վերաձեւակերպում/ կատարված լինելու մասին:

ՀՀ ֆինանսների նախարարություն

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝Գագիկ Շամշյանի

Հովիվը Աղձք գյուղի սարում իր 7 կթու կովերին, 6 ցուլիկներին եւ մեկ երինջին հայտնաբերել է սատկած: Կասկածներ կան, որ անասուններին թունավորել են:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 4 + 8 + 17 + 22
Կոտայքի լեռներ	+ 4 + 7 + 17 + 21
Կոտայքի նախալեռներ	+ 12 + 15 + 23 + 26
Գեղարքունիք	+ 5 + 9 + 16 + 21
Լոռի	+ 6 + 10 + 20 + 24
Տավուշ	+ 6 + 9 + 21 + 24
Արագածոտնի լեռներ	+ 3 + 6 + 17 + 21
Արագածոտնի նախալեռներ	+ 10 + 15 + 23 + 28

Արարատ	+ 13 + 16 + 26 + 29
Արմավիր	+ 14 + 17 + 27 + 30
Վայոց ձորի լեռներ	+ 5 + 8 + 17 + 21
Վայոց ձորի նախալեռներ	+ 14 + 18 + 27 + 30
Սյունիքի լեռներ	+ 6 + 9 + 16 + 19
Սյունիքի նախալեռներ	+ 9 + 14 + 20 + 24
Սյունիքի հովիտներ	+ 15 + 18 + 26 + 30
Երեւան	+ 15 + 17 + 28 + 30

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **09.06.2026**
Տպաքանակ՝3968
Հասցեն՝Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*